

ԲԱԺԱՆՈՂՅԱԳՐՈՒԹԻՒՆ  
Պուշկարիոյ համար  
Տարեկան 12 ծր.  
Վեցամսեայ 6 »  
Արսասահմանի հա-  
մար Տարեկան 15 »  
Վեցամսեայ 8 »  
Անկերիկայի համար  
Տարեկան 3 ծր.  
Վեցամսեայ 1.50 »  
ԿԱՆԻԿԻ ՎՃԱՎԵԼԻ

Ծանուցումն սոյոր առաջին  
երեսին համար 40 սանթիմ  
է. իսկ վերջին երեսի հա-  
մար 20 սանթիմ է. երեսին  
սեւեթի սեղաններու համար  
20 Օլլո գեղջ կրչայ :

Պուշկարիոյ համար ձեռքի  
( 15 ՍԱՆԹԻՄ )  
Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

# ՇՄԱՐԹԻՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱԲԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔԵԱՔԻՒԹ ԵՒ ՇՄԱԼԹ ՕՐԵՐԸ  
Отговорникъ: Д-ръ Никола Бакърджиевъ

Դամակ եւ դրամ դրկի  
Խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна  
Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չնն տրուի

Արսասահմանի համար ձեռքի  
( 20 ՍԱՆԹԻՄ )

## ԿՐԿՆՎՈՒՄ Է

Հազիւ հազ Պրանսան մի քիչ  
խաղաղել էր այն փոթորիկներէրից,  
որ պատճառում էր Իրէյֆուսի  
խնդիրը, և պատրաստվում էր  
ընդհանուր ներումով վերջնակա-  
նապէս խաչ գնել նրա վրա, երբ  
կրկին բարձրացան բողոքող ձայ-  
ները ու սկսեցին արեւոյն  
Պրանսական կեանքը: Այսօր բո-  
ղոքում են թէ հասարակապետու-  
թեան թշնամիները, որոնք և  
Իրէյֆուսի թշնամիներ են, և թէ  
ինքը Իրէյֆուսը, գնդապետ Պի-  
քարը և Զօլան:

Արեւմտեան Վալդէք Բուսոյի նախա-  
րարութիւնը իր նպատակին չը  
հասաւ Իրէյֆուսին ներելով,  
եւ շատ բնական էր. որովհետեւ  
քաղաքները չունեցաւ վճարող-  
կան դիրք բռնել Իրէյֆուսի երկ-  
րորդ գատի միջոցին, ուղեց թէ  
գայլերը կույտ մնան և թէ ոչխար-  
ները ողջ: Բալդէքները չունենա-  
լով բացարձակապէս պարզելու  
Իրէյֆուսի անմեղութիւնը և նրա  
գատապարտողներին մեղաւոր լի-  
նելը, նախարարութիւնը իբր թէ  
գլխավոր, Իրէյֆուսին աղտու-  
թիւն անց հաւատարմով որ այդ-

պիտով թէ հասարակապետութեան  
թշնամիները կը գոհանան և թէ  
ինքը Իրէյֆուսու ու արգարու-  
թեան ուրիշ պաշտպանները: Բա-  
նեց դուրս եկաւ որ ոչ ոք գոհ չէ  
մնացել. հակառակորդները ու-  
զում են Իրէյֆուսի կորուստը, իսկ  
Իրէյֆուսը, Զօլա և Պիքար միմի-  
այն Արգարութիւն:

Եւ նախարարութեան բոլոր  
ջանքերը երկիրը խաղաղացնելու  
համար՝ կիսատ պառտ միջոցնե-  
րով, զուր անցան. այսօր Իրէյ-  
ֆուսի խնդիրը նորոգվում է և  
մտնում իր երրորդ շրջանի մէջ:  
Եւ այդ հետեւանքն է անուշի կա-  
պելու քաղաքականութեան:  
Փափուկ ու դժուարին է Լուպէի  
և նախարարութեան կացութիւ-  
նը. մի կողմից արգարութիւն են  
պահանջում նրանք, որոնց ներում  
է շնորհվում, միւս կողմից գոչում  
են ներել պէտք չէ նրանք, ու-  
րոնք հասարակապետութեան մո-  
լեռանք թշնամիներ են: Արգար  
այս անգամ Լուպէի կառավարու-  
թիւնը պէտք է կարողանայ վերջ  
նակեալապէս և վճարողական հա-  
րուածով կտրել այդ գործան  
հանգոյցը, թէ կրկին վարանումով  
պէտք է գործ տեսնի: Որքան  
չուտ այդ հարցին վերջ տրի,  
այնքան լաւ. որովհետեւ եթէ մի-

քիչ ուշանայ, կրկին Պրանսական  
ժողովուրդը իրեն յատուկ կրքով  
պէտք է նետով այդ գործի ե-  
տեւից, ու ամեն բան մոռանայ  
աշխարհի երեսին...  
Յանկալի էր որ Պրանսայի  
կառավարիչները կորովի պետա-  
կան մարդիկ հանգիստնային և  
անվախ կերպով այդ ժահրոտ  
վէրքը կորէին հանէին Պրան-  
սայի կրծքից, որով նա այնքան  
երկար տանջվեց:

Ն. Ա. Մ. Ա. Ա. Տ. Ո. Ի. Փ  
Ամերիկայի և եգիպտոսի չը  
վճարող բաժանորդներուն. — կը  
խնդրենք շտապել բաժնեգինե-  
ները մինչեւ փետրուար մէկ ան-  
պատճառ հասցնել մեզ, Մինչեւ  
այդ ժամանակ չը վճարողներուն  
այլեւս «Շարժում» չի պիտի զըր-  
կուի: Միեւնոյն ժամանակ չը  
վճարողներուն անունները պիտի  
հրատարակուի «Շարժում» մէջ:  
— Պօֆիայի մէջ «Շարժում»-ի  
գործակալ կարգուած է Պ. Թագուչ  
Յակոբեան. բաժանորդ գրուիլ  
ուզողները և բաժնեգին վճարող-  
ները անոր դիմեն:  
—)(—

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 15 Դեկտեմբեր  
(Շար. Ասխորդ քրեկն և վերջ)

Սիմ, սիմ, սիմ... դէհ ըսէ,  
ինչ պիտի ըսես. Սիմաուն Ասանկ  
ալ եղաւ Կիլիկիոյ կաթողիկոսին  
խնդիրը:  
Հազար անգամ «սիմ» «սիմ»  
ըրին, մինչեւ որ վերջապէս Սի-  
մաուն ըսին:

Աս լուրն ալ անցեալ նամակիս  
մէջ պիտի զետեղէի, բայց չեմ  
գիտեր ինչո՞ւ մոռցայ, մնաց  
աս անգամին:  
Վերջապէս կրօնական ժողովը  
ձայներու բազմութիւնով համա-  
ձայնեցաւ շատ անգամ յիշուած  
կառավարութեան ցանկին հետ:

Հաստապիղ, հաստափոր և գո-  
մէշի ուղեղներ պատրիարքն ու  
սրբազանները չի կրցին մինչեւ  
վերջը դիմագրել Բ. Իրան այդ  
պարէն պահանջին: Մինչեւ  
վերջին օրերը խումբ մը եպիս-  
կոպոսներ կը դիմագրէին ցանկ  
տալու գաղափարին, բայց վեր-  
ջերս, չեմ գիտեր ինչ կախար-  
չական ուժի շնորհով ժլտագոյն  
Գրիգորիս մովհաննէսեան «ան-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՎԱՐԱՆԱԾ ԹՈՉՆԻԿ

VI.

Երեկոյթը վերջացաւ, քէֆը կա-  
տարեալ էր. կենացներ խմելոցին, ճա-  
տեր արտասանվեցին հայ ազգի լու-  
սաւոր սպառազայի մասին, ու հանդի-  
սականները ցրվեցին:

Հեռացայ և ևս, անորոշ տպա-  
ւորութեան տակ:

Ինչի՞ անորոշ տպաւորութեան,  
իհարկէ կը հարցնի ընթերցողը:

Նրա համար որ Թոնչիկի մասնա-  
նիշ արած կեղծութիւնը կարծես այդ  
երեկոյթին աւելի որոշ կերպով պատ-  
կերացաւ ինձ, ու ես անհամբեր սպա-  
սում էի երկրորդ օրվան որ գնամ  
Թոնչիկի մօտ, իմ ստացած տպաւո-  
րութիւնները հազարգելու նրան:

Հետեւեալ օրը առաւօտեան ժամի  
տասն ու մէկին Թոնչիկի մօտ էի.  
այսօր նա արդէն անկողնի մէջ էր,  
և աւելի թոյլ, աւելի ուժասպառ ե-  
րեւաց ինձ. գալուս համար զղջացի,  
կրկին հիւանդ մարդին պէտք է ան-  
հանգստացնէի. մէկ էլ մտածեցի՝  
ինչ անեմ, թո՛ղ համբերութիւն ու-

նենայ լսելու. կասկածը ինքը սրտիս  
մէջ արծարծեց, հոգեկան հանգստու-  
թիւնս վրդովեց, Երեկոյթի երեկոյ-  
թին անգամ մի հանգիստ վայրկեան  
չունեցայ. մարդկանց ամեն մի հայ-  
րենասիրական խօսքին, ամեն մի  
ճառին կասկածով վերաբերվեցի,  
թերեւս նրանք բոլորովին անկեղծ  
էին, իսկապէս ոգեւորվում էին զքե-  
զախտ հայրենիքի ապագայով, իս-  
կապէս պատրաստ էին ամեն մի զո-  
հողութեան, այդ վարդազոյն սպա-  
գան ներկայ, իրական, չօջափելի  
ներկայ դարձնելու: Այդ խոհումներին  
մէջ էի, երբ արանած Թոնչիկը  
բարակ ձայնով լուսութիւնը ընդհա-  
տեց:

— Ինչի՞ ես լուռ, Սուրէն, եւ այդ-  
պէս մտայլ, Երեկոյթի մասին ոչինչ  
չես խօսում, ի՞նչպէս անցաւ. լաւ  
քէֆ արե՞ք բազմութիւն կա՞ր:

— Այո, մեծ բազմութիւն կար,  
նոյնիսկ վրացիներ. լաւ քէֆ արին,  
բայց ես չարի:

— Ինչի՞, գու մի՞թէ երիտասարդ  
չես, մի՞թէ գինի չես սիրում եւ չես  
խմում:

— Այո, սիրում եմ. քէֆն էլ եմ  
սիրում, ուրախութիւնն էլ բայց  
քէֆ անելու չը գնացի. այլ դիտելու  
թէ մտքիկի ֆեֆի մեջ ի՞նչպիսի հայ-  
րենասիրներ են:

— Էհ, ի՞նչպէս տեսար:

— Տեսայ, Ամեն մարդ ճառում է,  
գործի ամեն դժուարութիւնները դի-  
րացնում ու լսողին լեռնեղից, ժայ-  
ռերից թոնցնելու չափ ոգեւորում իր  
անձնական ոգեւորութեամբ, Այն եզ-  
րակացութեան եկայ, որ եթէ մի  
մեծ, շատ մեծ այնքան մեծ հայկե-  
րոյթ լինի, որին մասնակցեն աշ-  
խարհիս բոլոր հայերը եւ բաւելու

չափ խմելք ունենան խմելու, եւ մի  
երեւելի, դիւթիչ ճարտասան էլ իր  
տաք ճառից յետոյ, դէնք բաժնի եւ  
առաջարկի հայ ազգի բոլոր թշնամի-  
ների վրա յարձակվել, ամէնքն էլ  
պատրաստ կը լինեն այդ քայլը անե-  
լու:

— Եւ քանի որ այդպիսի հայկե-  
րոյթ չէ կարող տեղի ունենալ, ու-  
րեմն եւ հայը չը պէտք է ազատվի:  
Չէ Սուրէն, ես քեզ հետ համաձայն  
չեմ. հայ ժողովուրդը այնպէս է, ինչ-  
պէս եղել են եւ միւս ստորուկ ժողո-  
վրդները:

Ստորուկ ժողովուրդը կամաց կա-  
մաց կը շարժվի, մինչեւ որ մի գեղե-  
ցիկ օր էլ կը ցնցվի: Արբելու պէտքը  
ունեն շարժման առաջնորդները—դե-  
կավարները: Արբելու ոչ թէ գինով,  
այլ գաղափարով, ազատութեան տեն-  
չով: Եւ պէտք է խոստովանել որ այդ  
բանը պակասում է մեր պաշտօնական  
եւ ոչ պաշտօնական յեղափոխական-  
ների մէջ:

Չորս տարի է անցել այն օրից,

վարտիքն եպիսկոպոսը անցաւ ցանկի հակառակորդներու բանակէն Օրմանի կողմը և ձայներու մեծամասնութիւնը կազմուեցաւ:

Աս վճռական ժողովին Մանկունի Վահրամ եպիսկոպոս չի երթար, արեւելեան տիպլումատութիւն կընէ և հիւանդ կը ձեւանայ:

Արեւմտեան կիլիկիոյ ընտրողները 6 անուն ցանկ մը պիտի ներկայացնեն կառավարութեան ի սրբազրութեան: Կառավարութիւնը ցանկէն պիտի առնէ իրեն համար «անախորժ» անձներու անունները՝ պիտի թողնէ երեք հոգի անունը և վերագործնէ այդ ցանկը կիլիկիոյ ընտրողներուն: անոնք ալ ատ երեքէն մէկը կ'առնուի պիտի ընտրեն:

Եթէ վերջապէս աս ձևով պիտի ըլլար, ինչո՞ւ մեր հաստագլուխ սրբազանները ուղիղ 8-9 ամիս քաջքններ խնդիրը, երբ ամառ ալ նոյնը կարելի էր ընել:

Խապայեան եպիսկոպոսի նորէն Երուսաղէմ հրաման գնաց որ Ատանայ երթայ ընտրութիւններուն ներկայ ըլլալու: Ինչ մը առաջ կ'ընթացող, աչք միտար, կարելի է թէ աս անվերջ խնդիրը վերջ մը պիտի ունենայ աս անգամ:

Օրմանի ուրախութեանը շափ չիկայ համոզուած է որ իրեն անունն ալ պիտի ըլլայ ցանկին մէջ և արդէն իսկ կերպէ Սոսյ աթոռը: «Կաթողիկոս տանն կիլիկիոյ» ստորագրութիւնը... Արագ մի՛ վազե՛ր, Օրման զատե՛, քոքերդ կը ցաւցնես, քեզի ընտրելու համար քեռ շատ հաց ու պանիր կայ: Թակարդին շարքը, լքուեալան մեքենանին գործի են գրեթէ Մեսրոպը Բարգուղիմէոսը...

Ի հարկէ ես յոյս չունիմ, որ «աղէկ» մէկը ընտրուի այդ ատուին համար, բայց կը վստահեմ:

հիմ յուսալ որ Օրմանի կամ Մեսրոպի ու Բարգուղիմէոսի պէս հրէշներ ալ ընտրուի շափ չիկայութիւն չեն ունենար մեր կիլիկիոյ պատուիրակները: Կը վստահեմ կարծել, որ թերեւս ոչ աղէկ, ոչ գէշ, ոչ միս, ոչ ոսկր անձ մը ընտրուի... Օրմանակ Խապայեան մը կամ Գուրեան մը...

Նորէն Ռամազան, նորէն ձեռք բախարութիւններ, նորէն պատրաստութիւններ 15 ի համար: Կարծես Սեպտեմբերի սկիզբէն մինչև օրս եղած բանտարկեալները բաւական չէին, եղած արտոնները ու տանջանքները՝ այս օր ալ սկսեցին կրկին պատրաստութիւն տեսնել 15 ին Համիտի, «նորոմի» կատակերգութեան խաղին:

Պժգալի հրէշ մը, ակնցի լրտես մը կայ Գրիգոր անունով: Ատ Սուլթանի շնիկը անցեալ օր սրբազանի մէջ քանի մը պանդուխտ հայերու (ամենքն ալ գործի տէր, անգործները ամէնքն արտուեցան) պարծանքով կըսէր որ ինքը այս ինչ ժողովի մէջ «սթոն» սենի, խառնիք ատու... առ ստորին պարծենկոտութիւնը չէր զիս հետաքրքրողը, այլ բարեկամական խորհուրդները և խորհրդածութիւնները ուղղուած հայ պանդուխտներուն: Չիտ յոյն կամ օտարազգի կարծելով՝ հայերուն աներկիւղ ու տիրական ձայնով մը կը քարոզէր, խորհուրդներ կուտար որոնցմէ երկուքը կուզեմ արձանագրել:

«Տղաքներ», կըսէր Համիտի էն պղտիկ շնիկը, մինչև Ռամազանի 16 ը աս սրճարանը մի գաք, դուրսերը շատ մի երեւաք. հրաման է եղած ամէն գաւառացի հայերը ձերբակալել, ճատ կարելի է որ աս սրճարանն ալ յանկարծ

կոխեն և մէջը եզոյ բոլոր գաւառացիները բանտը տանին:

Խօսակիցներէն մէկը համարձակեցաւ նկատել թէ ինչո՞ւ ատանկ կընեն, մենք գործի տէր և խաղաղ մարդիկ ենք: Լրտեսը բարձր ձայնով պատասխանեց. «Սուլթանի հանգստութեան համար հրամայուած է ձերբակալել ամէն գաւառացիները և խիստ հսկել իտալացիներուն վրայ, ասոնցմէ միայն կը վախնայ Քիէնտիս»: Ի յարկէ լրտեսն այս միտքը յայտնեց քիչ մը տարբեր բաներով ու ոճերով:

Որտեղ ուր մտնէ արդէն սկսած է առանց պատճառի 20—30 հոգի ձերբակալուած են:

Պետրոս Խամպուրեան, Իտալիոյ դեսպանատան առաջին քարտուղարի ծառան, Տիրիկցի, երկուսին մամ առնելու միջոցին կը ձերբակալուի: Բաթրոնը շէֆֆիկ պէյէն ուղեց չի սուսա, եղբայրն ալ ոռուս դեսպանատունը ծառայող է. եթէ այսչափ պաշտնութիւն ունեցողը կը բռնուի և ահա 6 օր է որ չեն արձակեր, ալ մտածեցէք պաշտպան չունեցողներուն վիճակը: Պետրոսի տունը խուղարկեցին. ոչինչ, ոչինչ գըտան, նոյնիսկ գրքի կամ լրագրի կտոր մը:

Թիւնէլի վերին հրապարակի վրայ, երկու վանցի հայեր փոքրիկ սրճարան մը ունէին, մաղազաներուն ուրճ կը հայթայթէին. 5 օր առաջ երկուքն ալ ձերբակալեցին: Խանութը անտէր մնաց ինչո՞ւ տարին, ինչ պատճառով, ոչ ոք գիտէ:

Սամաթիաի, Կէտիկ փաշայի և Պոսոյ միւս հայ թաղերու վիճակն ալ ողբարի է:

ԲԱԺ

—)(—

երբ յեղափոխականները պաշտօնապէս յայտարարեցին իրենց գոյութիւնը: Յիշում էք այն ժամանակվայ ողբերգութիւնը. Կուկունեանցը Պետրոսը քիչ էր գալիս Հայաստան մտնելու. այստեղից քանի քանի երիտասարդներ պատրաստուած էին Տաճկաստան մտնել, արտասահմանից մարդիկ ոտքի տակ տան իրենց ապագան և գնացին երկիր, իրենց քարոզածները իրագործելու: Եւ մենք տեսանք որ մի քանի գաղափարով արբած երիտասարդներ իրար խանցեցին ամբողջ տաճկական կառավարութիւնը ու ժողովուրդը ցնցեցին:

Չորս տարի անցաւ. դոնէ մեր մէջ, հովիտում ո՞ր են այն գաղափարով արբած մարդիկը. չը կան:

Ես յոյս չունեմ թէ կը լինեն:

— Բայց հայր սուրբ, ինչ իրաւունք ունէք այդպէս վերաբերվելու գէպի մի երիտասարդութիւն, որը զեռ նոր է սկսել գործել, դեռ նոր է

ուզում իր թեւերը բանալ:

— Ինչ նոր եղբայր, այդ երիտասարդութեան ղեկավարները չորս տարի առաջ էլ կային, կրկին քեֆերի ժամանակ պատրաստակա՞նութիւն էին յայտնուած կրակի ու ջրի մէջ ընկնել հայրենիքի ազատութիւնը ձեռք բերելու համար: Ո՛ր է, և զուգահեռն անգամ չը զոհեցին: Եւ երբէք էլ չեն զոհելու: Ըստ ուշադրութիւն դարձրէք. եթէ ես մեռնեմ կը յիշէք ինձ, եթէ իմ գուշակութիւնները ճիշդ չը լինեն, կանի ծէք ինձ: Եւ այդ բոլորի մէջ երիտասարդութիւնը չէ մեղաւոր. երիտասարդութիւնը, որը դեռ ընկղմված չէ կեանքի առօրեայ պահանջներին մէջ, միշտ պատրաստ է արձանագրեալ ամէն մի գաղափարական շարժումիւ հասանքի մէջ նետվել, միայն պէտք է ընդունակ լինել նրան այդ հասանքի մէջ քաշելու և գործել տալու: Իսկ այդ կարելի է անել միայն կենդանի օրինակով. նրա հետ ձեռք ձեռքի տուած յորձանքի մէջ նետվել:

— Յեղափոխութեան մէջ պէտքի որոշ վայրկեաններ չկան, Այն օրը, երբ ես է ժողովրդի մէջ սկսվում է գործնական յեղափոխութիւնը, այն վայրկեանից սկսած միշտ գործնական, անձնագոհ յեղափոխականի պէտքը կայ. Եւ ինքը իսկական, հարազատ յեղափոխականը երբէք տյոգ հաշիւներէ մէջ չի մտնի թէ՛ այսօր յեղափոխութիւնը իր պէտքը զգում է թէ՛ ոչ. այլ ուղղակի կերթայ գործի վայրը:

լով, բայց ոչ թէ կանգնելով և միմիայն առաջ, առաջ աղաղակելով, կանոնաւոր զօրքերն անգամ ետ կընկրկեն կուր գաղտնիք. եթէ նկատեն որ իրենց հրամանատարները միշտ ճիգեր են թափում վստահից խուսափել, գնտակները տեղատարափից հեռու մնալ:

— Բայց ինչպէս կարելի է հաստատապէս ստել որ Կերկայ առաջնորդները շատերը պէտք զգացված միջոցին իսկոյն չեն նետվել վտանգի առաջ:

— Յեղափոխութեան մէջ պէտքի որոշ վայրկեաններ չկան, Այն օրը, երբ ես է ժողովրդի մէջ սկսվում է գործնական յեղափոխութիւնը, այն վայրկեանից սկսած միշտ գործնական, անձնագոհ յեղափոխականի պէտքը կայ. Եւ ինքը իսկական, հարազատ յեղափոխականը երբէք տյոգ հաշիւներէ մէջ չի մտնի թէ՛ այսօր յեղափոխութիւնը իր պէտքը զգում է թէ՛ ոչ. այլ ուղղակի կերթայ գործի վայրը:

Խօստացած էի տեղեկութիւններ տալ քաղաքիս «Կատարական խորհուրդի» մասին և այսօր կուգամ համառօտապէս պատմել ամէն եղելութիւնները:

Կատարական խորհուրդի անգամնրութիւնը 20 է, որոնց ամէն մէկի անունը յիշատակել զանց կառնեմ, և միայն մի քանիներունը կը նշանակեմ որոնք ինքզինքնին ժողովրդին ազգասէր ու բարի հռչակելով՝ ուղածուն խաղը կը խաղան: Այս ազգատեացներու անուններն են, Պ. Ֆուռունճեան գաղտնաստանական խորհուրդի քարտուղարը, Լակլակեան (նախագահը), Պատմաճեան (գանձապահը), Ասոնք են խորհուրդի ղեկավարները. Ինչպէս ուզեն այնպէս ազատ ու արձակ կը խողցնեն իրենց սանձը:

Ինչու համար են միւս անգամները... ղեկավարներուն գործիք ըլլալու թէ չէ աշխատակ խաղալու... Եթէ աշխատակ խաղալու համար ստանձնեցին այդ պաշտօնը, ըսելիք մը չունինք, իսկ եթէ քննել ու զննելու և կեղծութիւններէ զերծ պահելու համար անցան իրենց պաշտօնի գլուխը, հապա ինչպէս կը ըլլայ որ խեղճ արբերու հայրական մնացած ժառանգութիւնները, դրամագլուխները կը կորսուին: Մօտ 40 «օսմ» ոսկիէն աւելին գումար մը բաց կը մնայ արձանագրութեան հաշուեցուցակէն. ո՛ւր մնաց այն կորրիկ զեղին ոսկիները, և որո՞ւ կուրդը անցաւ: Սակայն ո՞վ է այս ամենի մեղաւորը, Մսակապ ծայրագոյն եղեկիէլ վարդապետը:

Այս ամենը քսածներս թերեւս անհեթեթ թուի, բայց մենք իրական ապացոյցներով շատ դիւրութեամբ պիտի կրնանք ապացուցանելու մասը լուր եղեկիէլ:

վարդապետի մեղաւոր ըլլալը՝ 1895 թուականին սկսեալ մինչեւ օրս Կատարական խորհուրդի անդամոց մէջ պատժելիներ անպակաս է այն օրէն սկսեալ, երբ հաստատուեալ է վարդապետ ոտք դրաւ քաղաքս 15 օրուայ զուտը գատարական խորհուրդոյ անդամները փոխել առաւել զեղեկել վարդապետը մի քանի հարուստներու դրամամբ առարկելով թէ՛ անկարող են այդ պաշտօնը վարելու։ Ընտրեալները թիչ թէ՛ շատ ազէկ մարդեր էին, Ժողովուրդը գոհ էր, որովհետեւ լաւ հոգ կը տանէին անտէր անտիրական որբերուն։ Յաւալիք ըսել թէ շատ ժամանակ չանցած նորէն փախցնել տուաւ (միեւնոյն առարկութիւնները ընելով) և այս անգամին դրամարկիլի բանալին նշեցի վարդապետը իր քով առաւ իբրեւ լաւ մը պահելու։ Թր մըն ալ տեսնենք ազգարարութիւն մը փակցուցած էր առաջնորդարանի դռան ուր հրաւիրած էր թաղ իմեծ գլուխները (աղագային ջողերը) ներկայ գտնուիլ և ամենու հաւանութեամբ փոփոխում մտցնել կանոնադրութեան մէջ։ 1895 սեպտեմբեր 20ին, բոլոր ազգային ջողերը գլուխ գլխի վարներով կամայ ակամայ ստիպուցան կարգ մը յօդուածներ աւելցնել կանոնադրութեան մէջ։ . . . անշուշտ պէտք է յիշել հոս որ մասարձան վարդապետի պոռկոտներուն առթիւ ստիպուած էին ընդո նիլ այդ մի քանի վիսաւարեր յօդուածները, թէեւ երիտասարդութիւնը (բան հասկցողները) ձայն բարձրացուց այդ յոռի ընթացքին դէմ, սակայն ո՞վ եղաւ լսող։ Ոչ ոք։ Ինչու որ նիւթապէս աղքատներ էին ձայն բարձրացողները, չէին կարող ազդեցութիւն բանեցնել, և վախցան որ վերջէն խոնաւ բանտերուն մէջ փտտին։ Մի թէ՛ հեռու է մասըլուր վարդապետէն։

մեծ խնդիր է անոնք կատարարութեան սալը։ Եւ չի առաւ վարձապետ Ուրֆայի Կէոքը, Տիգրանակերտցի Գէորգ Չարուճեանը, ասոնք երեք տարի քաղցէն վերջ բանտին մէջ մեռան երկուքն ալ։

1898 դեկտ. 15ին գատարական մի ժողով գումարուեցաւ նշեցի վարդապետը, հոն կը գտնուէին նաեւ բազում հասարակ անձինքներ։ Ժողովը բացուեցաւ առաւօտեան ժամը 4ին, և առեց մինչեւ 10ը. նորէն բաց գտան մեծկակ գումար մը, մօտ 200 օսմ. ոսկիի չափ ժառանգութիւն մը, որ յատկացուած է երկու հայ որբերու (Չուլհակեան եղբարք)։ Որբերու պաշտպանը (Պ. Ս. Չ.) կը բողբէր միշտ թէ՛ ի՞նչպէս կը կորսուի 200 օսմ. ոսկի։ Վերջապէս Տը օր իրարու վրայ չէզոք անձերէ ժողով գումարելով հաղիւ կրցան գտնել 200 օսմ. ոսկիէն 120, այն ալ ցիր ու ցան, հոս ու հոն տրուած։ Մեծ եղբայրը իր մասը (100 օսմ. ոսկի) առաւ և փոքրիկին 20 մնաց։ Եւ այն ալ ինչ զժուարութեամբ ձեռք ձգեցին՝ միայն Աստուած գիտէ։ Եւ ըսածներս ապացուցանելու համար շատ լաւ պիտի ըլլար եթէ փոքր որբ տղին հասցէն գիտցած ըլլայի և զուք անձամբ թղթակցէիք հետը, որը 1896 թուականին յուլիս 16ին միկնեցաւ գէպի Ամերիկայ առնելով հետը 20 օսմ. ոսկին։

Մենք գատարական խորհուրդի ղեկավարներէն (երեք անձինքը) ազգատեաղ անուանած էինք. իրաւունք չունի՞ք. եթէ իրենք անկեղծ ըլլային ոչ ոք պիտի կարողանար այդ 120 օսմ. ոսկին կոկորդը անցունել, ըսել է թէ չորս անձերու մէջ է այդ 120 օսմ. ոսկին, և այս խաղը ծագեցաւ մասըլուր Եզեկիլ վարդապետէն, հարս՝ ըլլայ. . . և պողա՛ղնին մնայ. . .

Վ. Ա. Մ. Շ. Ա. Պ. Ո. Ն.

**ՁՄԻՌՆԱԿԱՆ ՆԱՍԱԿԱՆԻ**

**ՆԵՐՍԷՍԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ**

Արդէն առաջին յօդուածին մէջ խոստացած էի իզմիրի ազգային շըրջանակին վրայ քիչ մը ծանրանալ եւ ի վեր հանել թէ հոս ոչ առողջ միտք, ոչ ճշմարիտ ազգասէր սիրտ։ Եւ ոչ նոյնիսկ իր պաշտօնին կատարելապէս գիտակ անձնաւորութիւններ կան։ Եւ թեթեւօրէն, շահամուր, գճուճ, վերջապէս փտած զազափարներով մարդիկ կամ օտարացած արարածներ կիշխեն։ Ուրիմն անոնց գործն ալ իրենց յատկութիւններուն մարմնացած հայելին պիտի ըլլայ անկասկած։

Այս անգամ ես ձեռք կառնեմ մի էական եւ փափուկ խնդիր, այն է արական որբանոցը։

Սոյն որբանոցն հաստատուած է 1897ին քանի մը կարողութեան տէր անձերով, որոց նպատակը եղած է զաւանդներէն որբեր—գազաններս Սուլթանի զոհերուն մացրդները—բերել խնամել դասնաբ. կրթել ու ապա վերադարձնել հայրենիքն աւերակ։

Որբերուն թիւը հետզհետէ ստուարացաւ, հասնելով 50—55ի, Օրական ծախսն առ նուազն երկու լիւրայի կը հասնէր եւ անով ալ մի գիտնաք թէ զոհացուցիչ խնամք մը կը արուէր. իրիկուան պարզ, շատ պարզ կերակուր մը, իսկ կէս օրին ջօրպա ընդհանրապէս, առաւօտեան թէյ, Ատեն մը այնքան նեղցունել ու զեր են պիւստէն որ իրիկուան ալ թէյ տուին, կը պատմէ ինձ վերոյիշեալ հաստատութեան սաներէն մին։ Կը սեռնէ՞ք թէ ինչ անտեսազէտ վարչական մարմին մըն է, Անցան երկու տարիներ եւ անա որբերէն շատեր հասակ առին. եւ վարչութիւնն իր մասնութի շրջանը թեւակոխեց. — Ի՞նչ ընել այս հասակաւոր որբերը, այսպէս զրկել հայրենիք. թէ արհեստ մըն ալ սորվեցնելէ վերջը։ Վերջինը հաւանական թուեցաւ, ու վարչութեան անդամներէն է՛ն եռանդունն ու զրական մարդը առաջ նետուեցաւ եւ հիմնեց «Իրձակարան ներսեան» Որբանոցը՝ անուամբ արհեստանոց մը։ Սկիզբէն բաւական վիսա կրեց, բայց վերջերս հազիւ հազ կրցաւ իր վիսաներն լեցնել, իր հոգածութիւնն

ու խնամքը գողցիլ են։ Բայց Սուրհանդակի մէջ բաւական հարուստեցաւ նուրիմ ստորագրութեամբ ծանօթ անձէ մը. նուրիմ կրէ թէ ան (Կ. Գէլիշեան) որբանոցի անուամբ կը շահի, ան որբերուն բաժինը կը պողնայ, եւ կարգ մը այս կարգի անվայել խօսքեր օրոնք երեւան ելան փոխանակ խրախուսական գովեստներու։

Նուրիմ կուրացած էր եւ չէ՞ր տեսներ թէ գործին սկիզբները որբան վիսաակար եղած էին այդ դրական եւ յարատեւող մարդուն։ Ո՞ր մէկ արհեստաւորը յանձն առաւ եւ կամ յանդգնութիւնն ունեցաւ այդպիսի զժուար գործի մը ձեռնարկութեան։

Քանի մը աշակերտներ ալ այլեւայլ խնամութեան ցրուեցին, որոնք ցերեկները կաշխատին անդադար, եւ գիշերները կը վերադառնան որբանոց։

Կարող կրթական մասին,

Ս. Մեսրոպեան նախակրթարան—վարժարանէն դեռ չըջնաւարտ չեղած սղաքներ որոնք զեռ պարզ ընթերցանութեան մը մէջ նոյնիսկ կը կազան, արհեստի զրկուեցան։ Ահա ամենամեծ պատասխանատուութիւնը որ կը ծանրանայ վարչութեան վրայ։

Այժմ քանի մը աղաք (10—12 սարկան) կը յաճախեն վարժատուն, Ֆիզիքական տեսակէտով ալ մի հարցնէք. այնքան ինկած, այնքան տկարացած էակներ են որ ոչ թէ մահը իրենց կը սպասէ այդ իրենց մահուան։ Եւ այս ամենուն պատճառ վարչութեան անհոգութիւնն է։ Ինչաչ ու չի ճանչցնել այդ նորահաս պատանիներուն թէ «գոյք այսօրուրէն կը մտնէք կեանքի տարբեր ասպարէզ, գոյութեան կռուի ասպարէզ, ուր ձեր առաջին քայլափոխին լարուած կայ մի դարան. . . մի դարան որ անզգալապէս, անուշ անուշ փայփայանքներով կը հրաւիրէ զձեզ գերեզման եւ այդ վերջին պահուն նա կերելի իր բովանդակ զազրելիութեամբ»։

Ինչո՞ւ այսպէս չը ջանալ այդ համբակ պատանիներու աչքին առջեւ բանալ կեանքի, ամենէն մեծ դարանին գաղտնիքներն ու զայն զգուշացնել անկէ։

Թողունք այս էական կէտերը անցնինք այն խնդրին, որ անբաժան ու սերտ կերպով կապ ունի այդ վրէժխնդրութեան ընդունակ պատանիներու հետ։ Ինչո՞ւ արդեօք վար-

խութեան գործը կը դրիլի դրական հողի վրայ։

— Բայց ի՞նչ էք կարծում հայր ոտքը, Տաճկաստանի մէջ կարելի է ստեղծել այնպիսի մի յեղափոխական մարմին, որը կարողանայ իր գործի պահանջներին բաւականութեամբ աւելցնել գործի վայրում եւ ինքը դառնայ ի կապէս տղրը եւ ղեկավարը։

— Ոչ զժուար է։ Բայց միեւնոյն զոհողութիւնները յանձն առնողները կարող են եւ կողմասուռ ու Պարսկաստանում ստեղծել այդ զօրեղ անխառն յեղափոխական մարմինը։ Մի խօսքով, յեղափոխական վարիչները պէտք է իննն գործնական եւ ամէն տեսակ զոհողութեան պատրաստ յեղափոխականներ, իրենց զննն նայն պայմաններին մէջ, ինչ պայմաններում որ գտնվում է Տաճկաստանում գործող յեղափոխականը. իրաւունքը պատասխանատուութիւնը եւ զոհողութիւնը հաւասար չափերով պէտք է լինեն։ Ով շատ է զոհում, նա աւելի իրաւունք պէտք է ունենայ գործը

վարելու մէջ, ով աւելի պատասխանատու գործ է յանձն առել, նա աւելի վճարական դեր պէտք է խաղայ յեղափոխական խնդիրներին մէջ. պատասխանատուութիւնը գուտ յեղափոխական գործի մէջ եւ գործի վայրում ոչ թէ գործի վայրից դուրս։ Յեղափոխութեան դրամ եւ զէնք մասկարարողները, լոկ մասակարարներ պէտք է լինեն, բայց ոչ հրամանատարներ, Գործերի վարիչները, հրամանատարները պէտք է երկրի մէջ լինեն։

— Բայց եթէ այդ տեսակ վտանգաւոր գործեր յանձն չեն առնում մտաւորապէս եւ բարոյապէս զօրեղները, այլ նրանք ձգտում են միշտ աւելի անվտանգ տեղերում ապրել, ուրիմն ի՞նչպէս վարվել, գործը թողնել քաջ, անձնագոհ, բայց մտաւորապէս բոլորովին անպատրաստ մարդկանց վրա։

— Ոչ, ամեն ճիշ թափել մտաւորապէս զօրեղներին էլ ուղղել գործի վայրը, իսկ եթէ այդ անկարելի է,

թողնել բուն ժողովրդական յեղափոխական տարրին լի գործը տեսնելու։

Եթէ մեր զարգացած երիտասարդութեան մէջ յեղափոխական զուտ տիպեր չը կան, այդ ապացոյց է որ մեր զարգացած դասակարգը առայժմ յեղափոխական չէ, եթէ չէ, ուրիմն թո՛ղ գործից հեռու մնայ, եթէ հայ ժողովուրդի կեանքի պայմանները իրենց անտանելիութեամբ իսկապէս այն կէտին են հասել որ նա միայն յեղափոխութեամբ կարող է փոխել իր վիճակը, այն ժամանակ այդ փոխութեան իրազգործելու համար անհրաժեշտ գործիչները ինքն իրենց երեւան կը գան։ Ոչ ազէտը եւ ոչ զարգացած արտեստական կերպով յեղափոխական կը դառնայ։ Արեւստական յեղափոխականը կամ յեղափոխական ձեւանալ ուզողը միայն կը խօսի եւ փոքրիկ անյաջողութիւններինց յետոյ նոյն իսկ յեղափոխութեան մասին խօսելուց կը զազարի։ Ի հարկէ բացառութիւն են կապում

յաւ իտեանապէս խօսողները. . .

— Է՛հ, հայր սուրբ շատ խստապահանջ էք։

— Ինչպէս խստապահանջ չը լինե՞մ գէպի այն մարդիկ, որոնք յեղափոխական ոչ մի գործ չեն կատարում, բայց յանդգնում են յեղափոխական վարիչներ լինել, միմիայն նրա համար, որ պատասխանութեան վայրից դուրս խօսում կամ շատ շատ դրամ են հանգանակում։ Խնդրե՛մ ասացէք, դրա մէջ յեղափոխական, պատասխանական ի՞նչ գործ կայ։ Ոչինչ եւ ոչինչ։ Խստապահանջ եմ, որովհետեւ այդպէսով մի վատ յեղափոխական դպրոց է ստեղծվում, որի մէջ պէտք է փչանան մեր ամենալաւ ուժերը. պէտք է վիսաուր գործը ւ Հաւաստացնում եմ ձեզ սիրտս տրաքվում է, երբ այդ բոլորը զգում եւ նախագուշակում եմ։

Այս ի՞նչ է եմ հիւանդ, թո՛չի նախախնամութիւնը եւ բնութիւնը ինձ մխել են անկողնին։

Վ. Ա. Մ. Շ.

չուծիւնը կը թերանայ ճանչցնել այդ գոհի մնացորդ որբերուն թէ՛ իրենք ատենով ունէին հարազատ ծնողք, ունէին հարստութիւն, ունէին երջանկութիւն, չունէին եւ ոչ մէկ բանի կարտուծիւն. բայց հիմա կապրին մուրացկանութեամբ. ուրիշի պատահանցին կարտ տանջալի կեանքով մը. ինչո՞ւ փոխուեցան այս ամէնքը...

Այս տեսակ խնդիրներ չուտով մտա կը գտնեն այնպիսի սրտերու մէջ որք կրած են հալածանք, բըսնութիւն ու տեսած կարմիր դանակ, որ մէկ շարժումով եւ հարուածով վերջ կը գնէ մարդկային անմեղ կեանքի:

Ինչո՞ւ արդեօք վարչութիւնը իր որբանոցէն աքսորել կուտայ այն տեսակիները, որոնք ճանչցած էին վերստին խնդիրները: Այո, այդ առաջին հալածանքն էր դպրոցական խաղող չըջանին մէջ, եւ պատմեմ մի միջոցէս. մի որբ պատանի, որ կը գտնուի դպրոցականք մը, գրած է նամակով մը իր եղբոր, որ պատրուպարուած է հաստատութեանս մէջ ախպէս. «Ախ, աղբարիկս, երբ պիտի մեծնաս որ միտանող երթեմք հայրենիք ու վերաշինենք մեր հօր աւերակ յարկը»: Նամակները պէտք են անգամ մը որբանոցի տեսուչը աչքէ անցնէ, եւ այդ խեղճուկ նամակն ալ պատահմամբ կ'իյնայ անոր ճիւղին մէջ. «է՛, հայրենիք, առ ի՞նչ է ի՞նչ, որբանոցը քանդել կուգէք. ապրիտաները» կըսէ ու կը պատռէ նամակը: Եւ ի՞նչ կը յուսաք այս ամէնէն:

Դուք երբ կը մտնէք այդ յարկին տակ կը տեսնէք անմիջապէս մի շատուկ կանոնագիր կախուած որ կը տրամադրէ քսորել այն ապրիտան տղաքը որ բարեխնամ կատարութեան հանուց հակառակ մի գրութիւն կամ իր ունենան իրենց քով. եւ արտաքսել այն պաշտօնեան որ գիւրութիւն կընծայէ այդ կարգի վնասակար բաներ ներմուծելու, կանոնագիրը վաւերացուած է ընդհանուր զիւանէն: Այս տեսակ կանոնագիր մը երբ տեսնէ այցելու, — մի ողջաւիտ այցելու — կրնայ այս բանը հիմ ըսնելով եզրակացնել թէ ի՞նչ փոտած, բարոյապէս փոտած անձինք են այդ վարչական մարմինը կազմող արարածները: Դու ընթերցող, անչուշտ պիտի ծիծաղիս անդիտակցարար, զիս անուանելով անդորոյ, վասն զի կատեմ այն անձերը որք զգուշացած են թրքական հողին ու ճիւղին մէջ բացորոշ խօսիլ ազգային ազատութեան հարցին վրայ, բայց գաղտնապէս ե՞րբ խօսեցան:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Խառն ժողովը Գաղատիոյ, Ռոտտոթոյի և Քլիի համար տեղապահ նշանակուած վարդապետներու հրահանգ տուած է որ Թննդեան տօնին իրենց թեմերը գտնուելու համար ճամբայ ելլեն, և միւս կողմէն իրենց հրամանագրերն ալ խնդրուելով պիտի զրկուի իրենց:

— «Թայմզ» կը հաղորդէ որ Բաղէշի առաջնորդը, որ Բաբկէն վարդապետէ քիչ մը վերջը ձերբակալուած էր, շղթայակապ Պոլիս պիտի բերուի:

— Բարիզի հայոց մատուան մէջ, ժողովրդի պահանջումով, հոգեհանգրիստ կատարուեք է հանգուցեալ Խորէն Սանփանէի համար: Մատուան հոգաբարձութիւնը մոմի և արարողութեան համար դրամի խնդիր հանած է:

— Էրզրումի առաջն. տեղապահ Զաւէն վարդապետ որ վերջերս այցելութեան ելած էր դէպի Պայազլի, տեղեկագրով մը պատրիարքարանի Պայազլիտի մէջ որբանոց մը հաստատելու պէտքը կըզգացնէ:

— Պոլկարիոյ Տօպրիչ քաղաքի մէջ հոգեհանգրիստ կատարուեք է որբերու հայր հանգուցեալ Զանչեանցի համար:

— Սիլվէն քաղաքի նախկին ուսուցիչ Յովհաննէս Տէր Մինասեան էջմիածնայ մէջ քահանայ ձեռնադրուելով վերադարձեք է Սիլվէն:

Եթէ երիտասարդ քահանան պիտի սիրէ իր հօտը և աշխատի ախոր օգտակար ըլլալու, որչափ ուսուցիչ ժամանակն էր, սրտանց կը շնորհատրեմք զինքը և յալոգութիւն կը մաղթենք իրեն:

«Էնտէրանտան Պէլժի մէջ նամակ մը կար Պօլսէն, որով թըղթակիցը կը հաղորդէ թէ Պարսիկ և Թուրք կառավարութեանց յարաբերութիւնները երբէք չեն վտանգուիր Տահին հայերը Պարսկաստան հրաւիրելով: Արդ՛հետեւ արդէն Տահկաստանի մէջ հայ չի կայ ելեր, և մնացածին հեռանալն ալ Խուրքիոյ համար կորուստ ըլլալէ զատ, բարիք մըն է ելեր: Թղթակիցը կըսէ թէ հայ սնունը պէտք է յնչուի այդ կողմերէն, և ասոր համար խորհուրդ կուտայ թուրք կառավարութեան Անատոլիոյ նահանգներու մէջ տեղաւորել դրսերէն զազմող մահմետականները:

Անչուշտ այդ թղթակիցը Պոլիսի ոսկիներուն համբաւած է, ինչպէս նաեւ այն թերթը որ կը բեւեցած էր այդ յոգուածը: Թղթակիցը ըստ երեւոյթին կամ պատմութենէ տեղեկութիւն չունի, կամ թէ ոսկին այնքան շատ առած է որ կը մոռնայ հայերու պատմական ազգ ըլլալը ու Տիգրանը լոկ աւանդութիւն կը հուշակէ:

Բացայայտ է որ այս յոգուածը գրուած է եւրոպական ազգերու միտքը մոլորեցնելու և հայասէր մամուլի ազդեցութիւնը կտրելու համար, ուստի եւրոպական հայասէր մամուլի ուղադրութիւնը կը հրաւիրենք այս կէտին վրայ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Բ. Դուռը լիովին գոհացում տուեր է անգլիական զեսպանտան գործակատար Պընսընի ա-

նոր, Մազրի զիւլի քով, զինուորներէն կրած վիրաւորանքին համար: Դեկտեմբեր 17ին թուրք զօրավար մը այցելելով Պընսընին, Բ. Դրան կողմէ ցաւակցութիւն յայտնեք է, միեւնոյն ժամանակ յայտարարելով թէ՛ երեք յանցաւոր զինուորները ձերբակալուած են ու արժանի պատիժը պիտի տեսնան:

— «Պերլինէր Թալլի Պօլսէն կը գրեն թէ Թուրքիա և Գերմանիա գաղտնի համաձայնութիւն կայացուցեք են, որուն համաձայն Թուրքիա Գերմանիոյ թոյլ տուած է Պարսից ծոցի ափերուն վրայ ձկնորսական կայաններ շինել, կապտուի որ շուտով Գերմանիա զրահաւոր մը կը կէ հոն:

— Ըստ «Մաթէն» ֆրանսական թերթի Լօնտօնի թղթակցին՝ թուրք մէնէրալ Օսման փաշա, Քիւրտիստանի էմիրի որդին և ժառանգը, Սելանիկէն Լօնտօն փախեր է և կը յայտարարէ թէ շուտով հայրենիք պիտի վերագառնայ հայերու հետ միանալով ապստամբութեան դրօշը պիտի բարձրացնէ Սուլթանի դէմ: Օսման փաշան թղթակիցը հաւատացուցեք է որ այդ նպատակի համար հայրենիքի մէջ զազանապան տեղեր շատ դէնքեր կան պահուած, և բաւական է միայն իր հոն երեւնալը, որ հարիւր հազար զինուոր իր դրօշի տակ մտնեն: Այդ ապստամբութեան նպատակն է Քիւրտիստանը ազատել այն անկարգ վիճակէն որուն մէջ կը գտնուի այդ նահանգը շնորհիւ թուրք տիրապետութեան:

— Թուրք կառավարութեան և Պօլսոյ միջազգային առողջապահական խորհուրդին մէջ եղած վէճը աւելի սուր կերպարանք առած է որովհետեւ նոր իրատեղով մը Տօքթ. Զիտերէր առողջապահական վերատեսուչ և բժիշկ նշանակուեք է Գալաթի մէջ:

— Վօտինայի մէջ (Սելանիկ) երեք պոլկար ձերբակալուեք են Եօրկիատիս անուն վաճառականէ մը հինգ հարիւր ոսկի պահանջած ըլլալուն համար:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Չինական պատուիրակները իրեն պատասխան տէրութեանց հաւաքական ծանուցագրին, կը պահանջեն որ երբ կայսրը ընդգուցի Իէքինի ամբողջութիւնները քանդուելու և յանցաւոր իշխանները զլիստեղու պայմանները, ցոյց տրուի թէ միջազգային զինուորներու արշաւանքները երբ պիտի գադրին և թէ եւրոպացիները ո՞ր տեղերը պիտի գրաւեն:

— Նիւ-Եօրք-Ղէրլտ իր Բարիզեան տպագրութեանը մէջ կըսէ թէ Չինու կայսրը պատասխանեք է տէրութեանց, պահանջելով որ Տին եթէ ընդունի հա-

ւաքական ծանուցագրի պայմանները, օտարականները գադրեցնեն իրենց գրաւումը: Կայսրը վերապահումներ կընէ ամբողջութեան քանդումի և իշխաններու զլիստեղանը մասին:

— Իէքինի ճաբոնական քիսպանը կըսէ թէ Չինաստանի կառավարութիւնը հակամէտ է ընդգուցիլ պետութեանց ծանուցագրի և թէ յուսալի է որ շուտով պատասխանէ այդ ծանուցագրին: Լի-Հունկ-Չանկ և Չինկ պահանջութիւն տուեք են թէ պետութիւններու պայմանները առանց դիտողութեան պիտի ընդունուին:

— Միջազգային զօրքերը թիէն Չինի ու Թաքուի մէջ տեղը կը կառուին Պօքսէրներու և Չինացի աւազակներու հետ:

— Վո Չոնկի ջրանցքին բերանը քարով լցուեք նաեւ եւն. գրուած է՝ օտար նաւերուն մուտքը արգելիլու համար:

— Դեկտեմբեր 18ին Բէքինէն Բարիզ կը հեռագրեն թէ Չինկ իշխանը և Լի հունկ Չանկ պետութեանց զեսպաններուն հազարներ են կայսերական հրամանագիր մը ծանուցանող թէ կայսրը կընդունի ծանուցագրի և կարտօնէ իր պատուիրակները բանակցութեան մտնել տէրութեանց ներկայացուցիչներուն հետ: Կայսրը թշնամութեանց զադարուած կը պահանջէ:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Ստոյգ աղբիւրէ տեղեկութիւն կը տրուի թէ Լուի Պօթա հրամանատարը ծանուցեք է պօէր զօրախումբներուն թէ Քրիկէր նախագահէն լուր մը ստացեք է որուն համաձայն պօէրները պէտք է կամ անձնատուր ըլլան և կամ առանձին շարունակեն պատերազմի: որովհետեւ գուրսէն ու է օգնութիւն սպասելու չէ:

— Նօքս զօրավարը թու չիտար որ Տըվէթ զօրավարը նորէն անցնի հարաւային Օրանտի կողմէն:

— Բրեթօրիսէն կը հեռագրեն թէ նախալի մէջ ու թ հազար պօէրներ կան:

— Ուրէշ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ֆրէնչ զօրավարը գրաւեք է Վէնտէրստաքը:

— Պօէրները մեծ գործունէութեամբ կամրացնեն Բարեյուսոյ գլուխի զինուորական բոլոր կէտերը:

Անգլիական կրէնֆիլտ զօրավարը 700 զինուորներով կը հալածէ պօէրները:

— Լօրտ քիշներ կը հեռագրէ Բրէթօրիսէն թէ Նօքս զօրավարին զինուորները կարգապահութեան մէջ կը թերուան. անգլիացիներուն և պօէրներուն միջեւ կատարուած ընդհարումներու պահանջ պօէրները մեծ կորուստներ կուեննան: